**Արձանագրություն N 2**

**ՀՀ ՖՆ կարիքների համար ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-25/4 էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը սկսվեց 16.12.2025թ. ժամը 15:00-ին:

***Մասնակցում էին՝***

***Հանձնաժողովի նախագահ՝***

**Ա. Մարտիրոսյան** - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ՝ բաժնի պետի պարտականությունները կատարող.

***Հանձնաժողովի անդամներ՝***

**Հ. Ղազարյան** - ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության ֆինանատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ.

**Փ. Քալաջյան** – ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ-ի տեխնիկական դեպարտամենտի համակարգչային ցանցի ադմինիստրատոր:

***Գնումները համակարգող***

**Լ.Սահակյան՝** ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետ.

**1. *Տեղեկություններ մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից ներկայացված հիմնավորումների վերաբերյալ***

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին չի ներկայացվել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

**2.*Տեղեկություններ հայտերի բացման մասին***

Հայտերի բացումը տեղի է ունեցել www.eauction.armeps.am կայքի միջոցով՝ հակադարձ աճուրդի օրը՝ 16.12.2025թ.-ին ժամը 15:00-ին:

Գնման վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն պահանջվել:

Հրավերում փոփոխություններ չեն իրականացվել:

**3.*Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին***

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-25/4 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

| Մասնակիցների անվանումը | Տվյալները |
|---|---|
| «Յուքոմ» ՓԲԸ | ՀՎՀՀ - 00024873, հասցե. ք.Երևան, Դավիթ Անհաղթ 8/4, Հեռ. 095555054, էլ. փոստ՝ corporate@ucom.am |

## 4. Հանձնաժողովի կայացրած որոշումները

**Հանձնաժողովը որոշեց.**

- կասեցնել նիստը և հայտերի գնահատումն իրականացնել 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- նիստը վերսկսել 17.12.2025թ. ժամը 10:00-ին:

17.12.2025թ. ժամը 10:00-ին գնահատող հանձնաժողովը, որին աշխատանքներին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի բոլոր անդամները՝ շարունակեց կասեցված նիստի աշխատանքները:

## <u>5.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին</u>

«Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

## <u>6.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը</u>

ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-25/4 ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկած գները ներկայացվում են ստորև.

| Հ/Հ | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | «Յուքոմ» ՓԲԸ | | | | |
| | | Արժեք (ՀՀ դրամ) | | ԱԱՀ (%) | Ընդհանուր գին (ՀՀ դրամ) | |
| | | Նախնական առաջարկ | Վերջին առաջարկ | | Նախնական առաջարկ | Վերջին առաջարկ |
| | Հանրային հեռախոսային ծառայություններ | 1273.34 | 1528 | 20 | 1273.34 | 1528 |

Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

## 7.Հանձնաժողովի կայացրած որոշումները

**Հանձնաժողովը որոշեց.**

1. Բավարար գնահատել «Յուքոմ» ՓԲԸ-ի հայտը և ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով վերջինիս ճանաչել հաղթող/ընտրված/ մասնակից:

## 8.Պայմանագիր կնքելու որոշման մասին

Հաղթող մասնակցի հետ՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ (անգործության ժամկետ կիրառելի չէ) կնքվելու է գնման պայմանագիր:

***Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**Գնահատող հանձնաժողովի Նախագահ** ____________ **Ա. Մարտիրոսյան**

**Գնահատող հանձնաժողովի անդամներ՝** ____________ **Հ. Ղազարյան**

____________ **Փ. Քալաշյան**

**Գնումները համակարգող՝** ____________ **Լ.Սահակյան**